ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/1116 «05» 10 2018թ.

«ԱՆՆԱ-80» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ռ. ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԻՆ
ք. Վանաձոր, Դ. Դեմիրճյան 20/23
ք. Երևան, Անդրանիկի 131/1

Հարգելի պարոն Վարդերեսյան

Երևանի քաղաքապետարանի և «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 05.04.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/30» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թվով երեք բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի Տեխնիկական բնութագրին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ հուլիսի 31-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2)»:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ «Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան»:

Տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից՝ Պայմանագրով սահմանված ժամկետներում չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները, չնայած այն հանգամանքի, որ Պայմանագրի 8.15 կետով սահմանված պատվիրատուի իրավունքներն ու

պարտականությունները իրականացնող Երեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից համապատասխան գրություններով Ընկերությանը տեղեկացվել է սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները իրականացնելու և ավարտելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն «ԱՆՆԱ-80» ՍՊԸ-ի կողմից համապատասխան քայլերը չեն ձեռնարկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից.»:

Վերոգրյալով պայմանավորված՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում չեն կատարվել ստանձնած պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Գ. ՉԹՐՅԱՆ

Կատ՝ Գ. Մուրադյան
Հեռ. 011514373